ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀՐԱՄԱՆ

«02» 10 2025 թ. ք. Երևան Թիվ 1218-Հ

ԼԵՎՈՆ ԱՐՏՈՒՇԻ ԵՂՈՅԱՆԻՆ
ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի 2024 թվականի մայիսի 03-ի եզրակացությունը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 20-րդ հոդվածի 7-րդ մասով.

հրամայում եմ՝

1. Արդարադատության առաջին դասի խորհրդական Լևոն Արտուշի Եղոյանին նշանակել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչության պետ (բարձրագույն 3-րդ)՝ ազատելով նրան նույն վարչության պետի տեղակալի (գլխավոր 1-ին) պաշտոնից:
2. Լևոն Եղոյանին հանել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց ծառայողական առաջխաղացման ցուցակից:
3. Աշխատավարձը սահմանել համաձայն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ
ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ